



## ՄԱՆՈՒԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀՊՏՀ կառավարման ֆակուլտետի դեկան,  
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

## ԱՆՈՒՇ ՇԻՐԻՆՅԱՆ

ՀՊՏՀ վիճակագրության ամբիոնի դոցենտ,  
տնտեսագիտության թեկնածու

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՇԱՐԺՆԹԱՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հոդվածում քննարկվում են աշխատանքի արտադրողականության մակարդակի գնահատման վիճակագրական խնդիրները և մեթոդաբանական հարցեր: Ըստ տնտեսական գործունեության տեսակների աշխատանքի արտադրողականության մակարդակի չափումներում որպես արդյունքային ցուցանիշ առաջարկվում է կիրառել զուտ ավելացված արժեքը, իսկ որպես ծախսային ցուցանիշ՝ աշխատանքի համախառն ծախսերը: Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) մեթոդաբանության համաձայն:

**Հիմնաբառեր.** աշխատանքի արտադրողականություն, փաստացի աշխատած ժամանակ, ամենամյա նվազագույն արձակուրդ, զուտ ավելացված արժեք, աշխատածամանակի նորմալ տևողություն

JEL: C1, N3, L5

Ժամանակակից տնտեսական համակարգում երկարաժամկետ տնտեսական զարգացում ապահովելու համար որոշիչ է աշխատանքի արտադրողականության աճի հիման վրա արտադրության արդյունավետության մակարդակի բարձրացումը: Զարգացած շուկայական հարաբերությունների

պայմաններում հենց աշխատանքի արտադրողականությունն է տնտեսական աճի հիմնական աղբյուրը<sup>1</sup>:

Երկրի տնտեսության աճը կարող է պայմանավորված լինել աշխատատեղերի ավելացմամբ կամ աշխատանքի արդյունավետության բարձրացմամբ: Տնտեսության աճի երկրորդ աղբյուրը կարելի է նկարագրել աշխատանքի արտադրողականության վիճակագրության օգնությամբ: Ուստի աշխատանքի արտադրողականությունը տնտեսության արդյունավետությունը բնութագրող կարևոր ցուցանիշներից մեկն է<sup>2</sup>:

Տնտեսական ներկա փուլում կառավարման կառույցները (միավորները) տնտեսության զարգացման վրա մարդկային գործոնի ազդեցության տնտեսական վերլուծության կարիք ունեն: Աշխատուժի (աշխատանքի) վրա կատարված ծախսերի և արտադրության արդյունքների միջև փոխկախվածությունը հստակ արտահայտվում է աշխատանքի արտադրողականության ցուցանիշով: «Մարդկային կապիտալի» (աշխատուժի ծախսերի ավելացման հաշվին) դերի մեծացմամբ պայմանավորված՝ ժամանակակից տնտեսությունում աճում է աշխատանքի արտադրողականության չափման հիմնախնդրի կարևորությունը: Ընդ որում, առավել մեծ նշանակություն է ձեռք բերում ոչ այնքան աշխատանքի արտադրողականության մակարդակի չափումը, որքան հարաբերականորեն ձեռք բերված դրա արդյունքների շարժնթացը<sup>3</sup>:

Աշխատանքի արտադրողականությունը բնակչության կենսամակարդակի բարձրացման կարևոր պայման է: Այդ աճը հնարավորություն է ընձեռում ավելացնելու իրական աշխատավարձը և բարելավելու արտադրության մրցունակությունը:

Աշխատանքի արտադրողականության մակարդակի գնահատումը (չափումը) կարող է օգտագործվել աշխատանքի շուկայի քաղաքականության նպատակների ձևակերպման և դրա արդյունքների արձանագրման համար: Օրինակ՝ աշխատանքի բարձր արտադրողականությունը հաճախ նույնացվում է մարդկային կապիտալի բարձր մակարդակի հետ, ինչն էլ հնարավորություն է ընձեռում սահմանելու կրթության և մասնագիտական վերապատրաստման ոլորտի հասցեական քաղաքականության առաջնահերթությունները<sup>4</sup>:

### **Աշխատանքի արտադրողականության չափման խնդիրները**

«Տնտեսության ինստիտուցիոնալ վերափոխումները հանգեցրին արտադրական հարաբերություններում փոփոխությունների: Աշխատանքի շուկան ենթարկվեց էական փոփոխությունների. գործազրկության հետ մեկտեղ առաջացան հիմնական և երկրորդական, ֆորմալ և ոչ ֆորմալ, լրիվ և ոչ լրիվ զբաղվածություններ: Ըստ տնտեսական գործունեության տեսակների արտադրանքի արտադրության վրա աշխատանքի ծախսերի համարժեք չափումը դարձավ բավականին խնդրահարույց:

<sup>1</sup> Տե՛ս **Митрофанова М.Ю.**, Производительность труда в современной экономической системе: автореф. дис. канд. экон. наук: 08.00.01 / М.Ю. Митрофанова, Чувашский гос. университет. М., 2010, էջ 3:

<sup>2</sup> Տե՛ս Ключевые показатели рынка труда (КПРТ), 9-ое изд. Международного бюро труда. Женева, 2015, էջ 157:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղը:

Սեփականության հարաբերությունների փոխակերպումը, մասնավոր հատվածի առաջացումը հանգեցրին վիճակագրական դիտարկման համակարգի էական փոփոխությունների:

Լայն տարածում ստացան թաքնված և անհատ ձեռնարկատիրական գործունեությունները, ընդլայնվեց երկրորդական (համատեղությամբ) զբաղվածությունը, առաջացան անօրինական միգրացիայի զբաղվածության ոլորտներ:

Այս պայմաններում մեկ զբաղվածի հաշվով աշխատանքի արտադրողականության չափումը դարձավ ցուցանիշի բովանդակությանը ոչ համարժեք: ՀՀ-ում վիճակագրական դիտարկման մեթոդների կատարելագործումը, ազգային հաշիվների համակարգի (ԱՀՀ-1993) ներդրումը և զարգացումը (ԱՀՀ-2008) հնարավորություն ընձեռեցին ըստ տնտեսության ճյուղերի և տնտեսական գործունեության տեսակների համարժեք գնահատելու արտադրության ծավալները ընթացիկ և համադրելի գներով: Այդ ժամանակահատվածում բարելավվեցին աշխատանքի շուկայի վիճակագրական դիտարկման, աշխատաժամանակի գնահատման մեթոդները, վիճակագրական հաշվառման համակարգում ներդրվեց տնտեսական գործունեության տեսակների սկզբունքորեն նոր դասակարգիչ, ինչը հանգեցրեց ըստ տնտեսական գործունեության տեսակների արտադրության սահմանների, համախառն թողարկման և ավելացված արժեքի չափման ժամանակ կիրառվող հաշվառման միավորների փոփոխությանը:

Սակայն մինչև օրս ՀՀ-ում մշակված և ներդրված չէ աշխատանքի արտադրողականության չափման և աշխատանքի համախառն ծախսերի հաշվարկման մեթոդաբանությունը, ինչի հիման վրա հնարավոր կլիներ հաշվարկել ըստ տնտեսական գործունեության տեսակների և ամբողջ տնտեսության մակարդակով մեկ զբաղվածի հաշվով աշխատանքի արտադրողականության ցուցանիշների մակարդակը և շարժընթացը:

Հիմք ընդունելով Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) առաջարկված մեթոդաբանությունները<sup>5</sup> և հաշվի առնելով ՀՀ առանձնահատկությունները՝ մենք առաջարկում ենք ըստ տնտեսական գործունեության տեսակների աշխատանքի արտադրողականության մակարդակի չափման և աշխատանքի համախառն ծախսերի հաշվարկման մեթոդաբանություն:

### **Աշխատանքի արտադրողականության հաշվարկման մեթոդաբանություն**

Աշխատանքի արտադրողականությունն արտացոլում է միավոր ժամանակում մեկ աշխատողի կողմից ստեղծված արտադրանքի ծավալը: Այս ցուցանիշը կարող է հաշվարկվել ինչպես բնաիրային, այնպես էլ արժեքային արտահայտությամբ<sup>6</sup>:

Բնաիրային մեծություններով հաշվարկը հնարավոր է նեղ ճյուղային մակարդակով, որտեղ որպես ցուցանիշ կարելի է վերցնել մեկ աշխատողի հաշվով արտադրված որևէ արտադրանքի ծավալը: Արտադրողականության այդպիսի ցուցանիշները կարելի է համեմատել ըստ երկրների, սակայն այդ

<sup>5</sup> St u OECD Methodology Comments. <http://www.oecd.org/std/prices-ppp/1961296.pdf>

<sup>6</sup> St u Руководство ОЭСР по измерению роста производительности на уровне отрасли и на агрегированном уровне, 2001:

մեթոդաբանությամբ հաշվարկներ կատարելու համար անհրաժեշտ տվյալները դժվար հասանելի են<sup>7</sup>:

Երկրորդ՝ աշխատանքի արտադրողականության մակարդակի չափման արժեքային եղանակը առավել տարածված և կիրառելի է հետազոտությունների մեծ մասում: Ըստ ԱՄԿ մեթոդաբանության՝ աշխատանքի արտադրողականության մակարդակը գնահատվում է ՀՆԱ (համախառն ավելացված արժեք՝ ՀԱԱ) և զբաղվածների թվաքանակի հարաբերությամբ: Այս ցուցանիշի համարիչում կարելի է օգտագործել նաև աշխատանքի համախառն ծախսերի (ըստ տնտեսական գործունեության տեսակների կամ երկրի մակարդակով տարվա ընթացքում բոլոր զբաղվածների հաշվով աշխատած ժամերի քանակը) ցուցանիշը: Այսինքն՝ այս դեպքում աշխատանքի արտադրողականությունը չափվում է ՏՀԶԿ մեթոդաբանությամբ և որոշվում է ոչ թե մեկ զբաղվածի հաշվով, այլ աշխատած ժամանակով: Այս մեթոդը միջերկրային համեմատությունների ժամանակ համարվում է առավել նախընտրելի, քանի որ չեզոքացնում է երկրների միջև աշխատածամանակի տևողության հնարավոր տարբերությունները<sup>8</sup>: Այս դեպքում առանձին երկրի, առանձին գործունեության տեսակի համար աշխատանքի արտադրողականության մակարդակը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$ԱԱ = \frac{ՀԱԱ}{\text{զբաղվածների միջին թվաքանակ} \times \text{մեկ զբաղվածի հաշվով տարեկան Փաստացի աշխատած ժամանակ}}: \quad (1)$$

Աշխատանքի արտադրողականության մակարդակի չափման արժեքային եղանակի առավելությունը միասնական վիճակագրական տվյալների (համախառն ավելացված արժեքի և ըստ տնտեսական գործունեության տեսակների զբաղվածների միջին տարեկան թվաքանակի) հասանելիության մեջ է:

### Տարեկան արդյունքային ցուցանիշի հաշվարկ

Միջազգային կազմակերպությունների և առանձին երկրների ազգային վիճակագրական մարմինների կողմից ըստ տնտեսական գործունեության տեսակների աշխատանքի արտադրողականության մակարդակի չափումներում որպես արտադրության արդյունքային ցուցանիշ է ընդունվում համախառն ավելացված արժեքը (ՀԱԱ), իսկ միջերկրային համեմատությունների ժամանակ՝ համախառն ներքին արդյունքն ըստ գնողունակության համարժեքության (ՀՆԱ-ն ըստ ԳՀ-ի): Մեկ զբաղվածի կամ միավոր համախառն աշխատանքի ծախսերի հաշվով ՀԱԱ աճը համարվում է աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետության, հետևաբար նաև աշխատանքի արտադրողականության աճի պայման<sup>9</sup>: ՀԱԱ-ն ներառում է հիմնական կապիտալի սպառման (մաշվածք) արժեքը, այսինքն՝ առարկայացած աշխատանքի մի մասը, որի արժեքը մաս-մաս փոխանցվում է նոր ստեղծված արժեքին: Հետևաբար՝ հիմնական կապիտալի սպառման հաշվառումը բարձրացնում է աշխատանքի արտադրողականության մակարդակը: Ուստի,

<sup>7</sup> Տե՛ս **Маккензи**, Эффективная Россия. Производительность как фундамент роста, 2009, էջ 45:

<sup>8</sup> Տե՛ս Производительность труда в Российской Федерации: Социальный бюллетень. Выпуск №9, июнь, 2017, էջ 5:

<sup>9</sup> Տե՛ս **Генкин Б.М.**, Экономика и социология труда. М., "НОРМА: ИНФРА-М", 2005, էջ 384:

որպես աշխատանքի արտադրողականության մակարդակի չափման արդյունքային ցուցանիշ նպատակահարմար է կիրառել ըստ տնտեսական գործունեության տեսակների զուտ ավելացված արժեքը:

### Տարեկան փաստացի աշխատած ժամերի հաշվարկ

Փաստացի աշխատած տարեկան միջին ժամերի վերաբերյալ տվյալները համարվում են կարևոր բաղկացուցիչ աշխատանքի արտադրողականության հաշվարկման ժամանակ և աշխատանքի արդյունավետության չափման համար օգտագործվում են որպես ավելի ճշգրիտ ցուցանիշ (բանաձև 1): Այդ տվյալները (ամբողջ տնտեսության մակարդակով՝ առանց ճյուղային մասնատման) հրապարակվում են ՏՀԶԿ-ի, ԱՄՆ-ի աշխատանքի վիճակագրության բյուրոյի և կյանքի ու աշխատանքի ստանդարտների բարելավման եվրոպական կազմակերպության (Cabrera and Galli da Bino, 2013)<sup>10</sup> կողմից: ՏՀԶԿ-ն հրապարակում է տվյալներ մի շարք երկրների վերաբերյալ. ՀՀ տվյալները բացակայում են: Ինչպես նշվում է կյանքի և աշխատանքի ստանդարտների բարելավման եվրոպական կազմակերպության 2013 թ. հրապարակման<sup>11</sup> մեջ, մեկ աշխատողի հաշվով տարեկան աշխատած ժամերի քանակը հաշվարկվում է աշխատանքային օրվա տևողության և տարեկան աշխատանքային օրերի քանակի արտադրյալի միջոցով: Աշխատանքային օրվա տևողության վերաբերյալ տվյալները հիմնվում են աշխատանքային շաբաթվա տևողության վրա, որոնց մասին տվյալները հրապարակվում են ԱՄԿ-ի կողմից ինչպես ամբողջ տնտեսության, այնպես էլ ըստ տնտեսական գործունեության առանձին տեսակների մակարդակով: Տարեկան աշխատած ժամերի միջերկրային էական տարբերությունները բացատրվում են տարեկան աշխատանքային օրերի քանակով և այնպիսի գործոններով, ինչպիսիք են ժամանակավոր անաշխատունակության, հղիության և ծննդաբերության, ընդմիջման և այլնի ժամանակահատվածները: ՏՀԶԿ-ն տարեկան աշխատած ժամանակի վերաբերյալ տվյալները ոչ բոլոր երկրների համար է հաշվարկում ինքնուրույն. օրինակ՝ ՌԴ-ի և ՀՀ-ի վերաբերյալ տվյալները հաշվարկվում են ազգային վիճակագրական ծառայությունների կողմից:

ՏՀԶԿ փորձագետները նշում են, որ տարեկան աշխատած ժամանակի ցուցանիշները, ըստ երկրների, հաշվարկվում են տարբեր մեթոդների և աղբյուրների հիման վրա, ինչն էլ հանգեցնում է անհամադրելիության: Մասնավորապես՝ դժվարություններ են առաջանում ըստ երկրների աշխատանքային օրերի քանակի որոշման հարցում. տոնական և հիշատակի օրերը հաշվի առնելը բավական պարզ է, սակայն ամենամյա արձակուրդի օրերի հաշվարկման դեպքում դժվարություններ են առաջանում, քանի որ փաստացի արձակուրդի տևողությունը հաճախ տարբերվում է ամենամյա նվազագույն արձակուրդի տևողությունից (հատկապես այն երկրներում, որտեղ օրենսդրորեն սահմանված չէ ամենամյա նվազագույն արձակուրդի օրերի քանակը): Այնուամենայնիվ, աշխատանքի արտադրողականության հաշվարկի համար առավել ճշգրիտ տվյալների բացակայության պայմաններում անհրաժեշտ է օգտագործել տարբեր մեթոդներով հաշվարկված տվյալներ:

Աղյուսակ 1

<sup>10</sup> Տե՛ս **Cabrera J., Galli da Bino C.**, Developments in collectively agreed working time 2012 //Eurofound (European Foundation for the Improvement of Living and Working Conditions), 2013 <http://www.eurofound.europa.eu/eiro/studies/tn1305017s/index.htm>

<sup>11</sup> Տե՛ս նույն տեղը:

**ՀՀ-ում աշխատանքային օրերի քանակը 2014–2016 թթ.<sup>12</sup>**

Տարիներ	Տարվա ընթացքում հանգստյան օրերի քանակը		Սարվա ընթացքում ցածրաբյուջե տնտեսական օրերի քանակը	Ամենամյա արձակուրդ (աշխատանքային օր)		Տարվա ընթացքում աշխատանքային օրերի քանակը	
	հնգօրյա ժամուշ ցերեկային	վեցօրյա ժամուշ ցերեկային		հնգօրյա ժամուշ	վեցօրյա ժամուշ	հնգօրյա ժամուշ	վեցօրյա ժամուշ
2014	103	52	14	20	24	228	275
2015	103	52	12	20	24	230	277
2016	104	52	11	20	24	230	278

ՀՀ-ում հնգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում աշխատանքային օրերի քանակը 228–230 է, իսկ վեցօրյայի դեպքում՝ 275–278 (աղյուսակ 1): Համեմատության համար նշենք, որ 2016 թ. հնգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում աշխատանքային օրերի քանակը էստոնիայում և Հունգարիայում 224 է, Լատվիայում, Լիտվայում և Ռումինիայում՝ 240, Ռուսաստանում՝ 230, իսկ Իռլանդիայում՝ 218<sup>13</sup>:

**Աղյուսակ 2**

**ՀՀ-ում փաստացի աշխատած շաբաթական միջին ժամերը ըստ գործունեության տեսակների (ժամ)<sup>14</sup>**

Տարիներ	Գյուղատնտեսության	Հանրագործական աշխատանքային	Աշխատանքային տնտեսության	Շինարարության	Մեծածախ և մանրածախ առևտուր	Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	Կապիտալի և հանրային սննդի կազմակերպում	Տեղեկատվություն և կապ	Ֆինանսավորում և ռեալ էսթատիկա	Գյուղատնտեսություն	Ճեպարկային արժեք
2014	29.2	46.4	44.9	43.2	50.6	52.6	54.4	44.0	42.1	38.7	
2015	24.3	45.7	43.7	49.2	49.1	53.1	43.9	43.4	31.7	35.9	
2016	26.8	46.2	45.6	45.9	48.9	46.8	49.7	40.6	40.0	37.9	

Աղյուսակ 2-ի տվյալներից ակնհայտ է դառնում, որ դիտարկվող գործունեության բոլոր տեսակներում, բացառությամբ գյուղատնտեսության, փաստացի աշխատած շաբաթական միջին ժամերը գերազանցել են ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված աշխատաժամանակի նորմալ տևողությունը (40 ժամ)<sup>15</sup>, իսկ գործունեության երեք (մեծածախ և մանրածախ

<sup>12</sup> Աղյուսակը կազմել են հեղինակները:  
<sup>13</sup> Տե՛ս <https://ain.ua/2017/08/21/skolko-rabotayut-i-otdyxayut-v-evrope-ukraine>  
<sup>14</sup> Տե՛ս «Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, 2016, 2017: Վիճակագրական ժողովածու, ՀՀ ՎԿ, Եր., 2017, 2018, էջ 127,128:  
<sup>15</sup> Տե՛ս ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 139:

առևտուր, փոխադրումներ և պահեստային տնտեսություն, կացության և հանրային սննդի կազմակերպում) տեսակներում փաստացի աշխատած ժամանակը գերազանցել է անգամ աշխատաժամանակի առավելագույն տևողությունը (շաբաթական 48 ժամ կամ օրական մինչև 12 ժամ)<sup>16</sup>: Արձանագրված տվյալները պայմանավորված են գործունեության այդ տեսակների առանձնահատկություններով. փաստացի գործունեությունը՝ 24-ժամյա ռեժիմով, մինչդեռ, համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի, ամենօրյա աշխատաժամանակի տևողությունը չի կարող գերազանցնել ութ աշխատանքային ժամը<sup>17</sup>:

Հիմք ընդունելով հասանելի վիճակագրական տվյալները (2014–2016 թթ. համար) և հաշվի առնելով աշխատաժամանակի վերաբերյալ իրավական նորմերը (հնգօրյա և վեցօրյա աշխատանքային շաբաթ, ամենամյա նվազագույն արձակուրդ՝ 20 և 24 աշխատանքային օր, տոնական և հիշատակի օրեր՝ 11–14 օր)՝ ՀՀ-ում տարեկան աշխատաժամանակը մեկ զբաղվածի հաշվով (աղյուսակ 3) մեր հետազոտությունում հաշվարկվել է փաստացի աշխատած շաբաթական միջին ժամերի հիման վրա (աղյուսակ 2):

Մեկ զբաղվածի հաշվով տարեկան փաստացի աշխատած ժամերի հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ.

$$\frac{\Phi.ա.ժ.}{Ա.օր} \times (Օ.օր - Հ.օր - Ա.ա. - Տ.օր.), \quad (2)$$

որտեղ՝ *Փ. ա. ժ.* - ն փաստացի աշխատած միջին շաբաթական ժամերն են (աղյուսակ 2),

*Ա. օր.* - ը՝ շաբաթական աշխատանքային օրերի քանակը,

*Օ. օր.* - ը՝ օրացուցային օրերի թիվը (365),

*Հ. օր.* - ը՝ տարվա ընթացքում հանգստյան (շաբաթ և կիրակի) օրերի քանակը,

*Ա. ա.* - ն՝ ամենամյա նվազագույն արձակուրդի աշխատանքային օրերի քանակը,

*Տ. օր.* - ը՝ տոնական և հիշատակի օրերի քանակը (աղյուսակ 1):

Աղյուսակ 3-ի տվյալներից ակնհայտ է դառնում, որ դիտարկվող ժամանակաշրջանում տնտեսական գործունեության գրեթե բոլոր տեսակներում, բացառությամբ գյուղատնտեսական գործունեության և ամբողջ տնտեսության, տարեկան փաստացի աշխատած ժամերը գերազանցել են աշխատաժամանակի նորմալ տևողությունը՝ 1920 ժամը ((52 շաբաթ – 4 շաբաթ ամենամյա արձակուրդ) x 40 ժամ): Համեմատության համար նշենք, որ 2016 թ. հնգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում ամբողջ տնտեսության մակարդակով տարեկան աշխատած փաստացի ժամերը էստոնիայում և Հունգարիայում կազմել են 1886, Լատվիայում, Լիտվայում և Ռումինիայում՝ 1840, Ռուսաստանում՝ 1997, իսկ Իռլանդիայում՝ 1810<sup>18</sup>:

<sup>16</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>17</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>18</sup> Տե՛ս <https://ain.ua/2017/08/21/skolko-rabotayut-i-otdyxayut-v-evrope-ukraine>

Աղյուսակ 3

**ՀՀ-ում մեկ զբաղվածի հաշվով տարեկան փաստացի աշխատած ժամերն ըստ գործունեության տեսակների (ժամ)<sup>19</sup>**

Տարիներ	Աշխատանքային շաբաթվա տևողություն	Գյուղատնտեսություն	Հանքագործական արդյունաբերություն	Սշակող արդյունաբերություն	Շինարարություն	Մեծածախ և մանրածախ առևտուր	Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	Կացության և հանրային սննդի կազմակերպում	Տեղեկատվություն և կապ	Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	Ավելացված արժեք
2014	5-օրյա	1332	2116	2047	1970	2307	2399	2481	2006	1920	1765
	6-օրյա	1338	2127	2058	1980	2319	2411	2493	2017	1930	1774
2015	5-օրյա	1118	2102	2010	2263	2259	2443	2019	1996	1458	1651
	6-օրյա	1122	2110	2017	2271	2267	2451	2027	2004	1463	1657
2016	5-օրյա	1233	2125	2098	2111	2249	2153	2286	1868	1840	1743
	6-օրյա	1242	2141	2113	2127	2266	2168	2303	1881	1853	1756

Հաշվի առնելով վերը ներկայացված մոտեցումները և հասանելի վիճակագրությունը՝ մենք կատարել ենք տնտեսական գործունեության 9 տեսակների համար աշխատանքի արտադրողականության մակարդակի չափում՝ ըստ ԱՄԿ և ՏՀԶԿ մեթոդաբանությունների:

Աղյուսակ 4

**ՀՀ-ում մեկ զբաղվածի հաշվով աշխատանքի արտադրողականության մակարդակը և շարժընթացն ըստ տնտեսական գործունեության տեսակների (հազ. դրամ)<sup>20</sup>**

Տարիներ	Գյուղատնտեսություն	Հանքագործական արդյունաբերություն	Սշակող արդյունաբերություն	Շինարարություն	Մեծածախ և մանրածախ առևտուր	Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	Կացության և հանրային սննդի կազմակերպում	Տեղեկատվություն և կապ	Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	Ավելացված արժեք
2010	1139	6604	4354	6537	3721	1746	1101	4203	9380	2265
2011	1486	5285	4525	6729	3956	2013	1743	5547	15626	2525
2012	1561	9562	3900	6720	4177	2092	2015	4279	15547	2798
2013	1789	8164	4124	6731	4384	1566	2037	4689	10307	2992
2014	1990	9805	4424	7111	4242	1978	2482	5588	10282	3241
2015	2024	8149	4879	8625	4441	1939	2259	6202	11350	3559
2016	2167	11119	5498	9524	3924	2816	2241	6074	15347	3830

<sup>19</sup> Աղյուսակի տվյալները հաշվարկել են հեղինակները ՀՀ ՎԿ տվյալների հիման վրա:

<sup>20</sup> Աղյուսակը կազմել են հեղինակները՝ ըստ ԱՄԿ մեթոդաբանության:



Աղյուսակ 4-ի տվյալները վկայում են, որ դիտարկվող ժամանակաշրջանում գործունեության գրեթե բոլոր տեսակների, բացառությամբ գյուղատնտեսության, փոխադրումների և կացության ու հանրային սննդի կազմակերպման, աշխատանքի արտադրողականության մակարդակները՝ հիմնական գներով, 2-ից 4 անգամ գերազանցել են ամբողջ տնտեսության աշխատանքի արտադրողականության մակարդակը: Մասնավորապես՝ հանքագործական արդյունաբերության և ֆինանսական գործունեության տեսակների աշխատանքի արտադրողականության մակարդակները գերազանցել են համապատասխանաբար՝ 3 և 4 անգամ: Հարկ ենք համարում նշել, որ գործունեության այդ տեսակներում զբաղվածների մասնաբաժինը ամբողջ տնտեսության զբաղվածների մեջ տատանվել է համապատասխանաբար՝ 0.7-ից 1.3 և 0.7-ից 1.6 տոկոսային միջակայքերում, ինչը նշանակում է, որ աշխատուժի մեծ մասն ընդգրկված է ցածր արտադրողականությամբ աշխատանքներում: Նվազագույն արտադրողականություն ունեցող տնտեսական գործունեության երեք տեսակներում կենտրոնացած է աշխատուժի գրեթե կեսը:

ՀՀ տնտեսության ԶԱԱ-ն 2016 թ., 2010 թ. համեմատությամբ, աճել է 43.7%-ով, իսկ զբաղվածների թիվը նվազել է 8.8%-ով: Սա նշանակում է, որ այդ տարիներին տնտեսությունում արձանագրվել է արտադրողականության աճ՝ շուրջ 1.6 անգամ՝ տարեկան միջին հաշվով աճելով 9.1 տոկոսով:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում տնտեսական գործունեության բոլոր տեսակների աշխատանքի արտադրողականության մակարդակները, ընդհանուր առմամբ, դրսևորել են աճի միտումներ (միջին տարեկան ամենացածր աճն արձանագրվել է մեծածախ և մանրածախ առևտրի (0.9%), իսկ ամենաբարձրը՝ կացության և հանրային սննդի կազմակերպման (012.6%) ոլորտներում՝ յուրաքանչյուր տարի ենթարկվելով մեծ փոփոխությունների: Այսպես՝ արտադրողականության մակարդակի ամենամեծ հավելաձևը դիտվել է ֆինանսական և ապահովագրական գործունեությունում. 2011 թ., նախորդ տարվա համեմատությամբ՝ 66.6%-ով, իսկ առավելագույն չափով աշխատանքի արտադրողականության մակարդակը նվազել է գործունեության նույն տեսակում՝ 2013 թ., նախորդ տարվա համեմատությամբ՝ 33.7%-ով: 2016 թ., նախորդ տարվա համեմատությամբ, արտադրողականության մակարդակի նվազում արձանագրվել է միայն մեծածախ և մանրածախ առևտրի (-11.6%), կացության և հանրային սննդի կազմակերպման (-0.8%), տեղեկատվության և կապի (-2.1%) գործունեության բնագավառներում: Տնտեսական գործունեության մնացած բոլոր տեսակների գծով դիտվել է արտադրողականության մակարդակի աճ, ընդ որում, հանքագործական արդյունաբերության և ֆինանսական և ապահովագրական գործունեության տեսակներում աճը եղել է առավել նշանակալի՝ շուրջ 1.4 անգամ:

Գրեթե նույն պատկերն է արձանագրվել նաև ժամային աշխատանքի արտադրողականության մակարդակներում (ըստ SՀԶ4 մեթոդաբանության) և շարժընթաց ում (աղյուսակ 5):

Աղյուսակի տվյալներից պարզ է դառնում, որ դիտարկվող ժամանակաշրջանում ժամային աշխատանքի արտադրողականության ամենաբարձր մակարդակն արձանագրվել է հանքագործական արդյունաբերության և ֆինանսական գործունեության տեսակներում, մասնավորապես՝ 2016 թ. ժամում մեկ զբաղվածի կողմից արտադրվել է համապատասխանաբար՝ 5194 և

8281 դրամի արտադրանք, ինչը 2-ից 3.5 անգամ գերազանցում է ամբողջ տնտեսության ցուցանիշի մակարդակը՝ 2181 դրամը:

Աղյուսակ 5

**«Հ-ում մեկ զբաղվածի հաշվով ժամային աշխատանքի արտադրողականության մակարդակը և շարժընթացն ըստ տնտեսական գործունեության տեսակների (դրամ)»<sup>21</sup>**

Տարիներ	Աշխատանքային շաբաթվա տևողություն	Գյուղատնտեսություն	Համադրործական արդյունաբերություն	Մշակող արդյունաբերություն	Եինարարություն	Սեծածախ և մանրածախ առևտուր	Փոխադրուներ և պահեստային տնտեսություն	Կացության և հանրային սննդի կազմակերպում	Տեղեկատվություն և կոոպ	Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	Ավելացված արժեք
2014	5-օրյա	1495	4634	2161	3610	1839	824	1000	2785	5356	1836
	6-օրյա	1487	4611	2150	3591	1829	820	995	2771	5328	1827
2015	5-օրյա	1810	3876	2427	3811	1966	794	1119	3107	7783	2155
	6-օրյա	1804	3862	2418	3797	1959	791	1115	3096	7755	2147
2016	5-օրյա	1758	5232	2621	4510	1745	1308	980	3252	8341	2196
	6-օրյա	1745	5194	2602	4478	1732	1299	973	3229	8281	2181

2014–2016 թթ. տնտեսության ժամային արտադրողականության մակարդակն աճել է տարեկան, միջին հաշվով, 9.3 տոկոսով՝ ըստ տնտեսական գործունեության առանձին տեսակների դրսևորելով տարբեր միտումներ: Այսպես՝ մեծածախ և մանրածախ առևտրի, կացության և հանրային սննդի կազմակերպման գործունեության տեսակներում դիտվել է ժամային աշխատանքի արտադրողականության մակարդակի նվազում՝ տարեկան, միջին հաշվով, համապատասխանաբար՝ 2.7% և 1.1%: Տնտեսական գործունեության մնացած բոլոր տեսակների գծով դիտվել է ժամային արտադրողականության մակարդակի աճ. ամենացածրը՝ *հանքագործական արդյունաբերություն* (տարեկան, միջին հաշվով, 6.1%), իսկ ամենաբարձրը՝ *փոխադրուներ և պահեստային տնտեսություն* (տարեկան, միջին հաշվով, 25.9%) գործունեության տեսակներում:

Ամփոփելով կարող ենք արձանագրել, հաշվի առնելով վերը ներկայացված մեթոդաբանական մոտեցումները և հասանելի վիճակագրությունն ինչպես ըստ տնտեսական գործունեության տեսակների, այնպես էլ ամբողջ տնտեսության մակարդակով, կարելի է իրականացնել մեկ զբաղվածի հաշվով աշխատանքի արտադրողականության մակարդակի չափում և դրա հարաբերականորեն ձեռք բերված արդյունքների շարժընթացի ուսումնասիրություն:

<sup>21</sup> Աղյուսակը կազմել են հեղինակները՝ ըստ ՏՀԶԿ մեթոդաբանության:

### Օգտագործված գրականություն

1. ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 139:
2. Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, 2016, 2017: Վիճակագրական ժողովածու, ՀՀ ՎԿ, Եր., 2017, 2018:
3. Митрофанова М.Ю., Производительность труда в современной экономической системе: автореф. дис. канд. экон. наук: 08.00.01 / М.Ю. Митрофанова, Чувашский гос. университет. М., 2010.
4. Маккензи, Эффективная Россия. Производительность как фундамент роста, 2009.
5. Генкин Б.М., Экономика и социология труда. М., "НОРМА: ИНФРА-М", 2005.
6. Ключевые показатели рынка труда (КПРТ), 9-ое изд. Международного бюро труда. Женева, 2015.
7. Руководство ОЭСР по измерению роста производительности на уровне отрасли и на агрегированном уровне, 2001.
8. Производительность труда в Российской Федерации: Социальный бюллетень. Выпуск №9, июнь, 2017.
9. Cabrita J., Galli da Bino C., Developments in collectively agreed working time 2012 //Eurofound (European Foundation for the Improvement of Living and Working Conditions), 2013, <http://www.eurofound.europa.eu/eiro/studies/tn1305017s/index.htm>
10. OECD Methodology Comments. <http://www.oecd.org/std/prices-ppp/1961296.pdf>
11. <https://ain.ua/2017/08/21/skolko-rabotayut-i-otdyxayut-v-evrope-ukraine>
12. <https://ain.ua/2017/08/21/skolko-rabotayut-i-otdyxayut-v-evrope-ukraine>

**МАНУК МОВСИСЯН**

*Декан факультета управления АГЭУ,  
кандидат экономических наук, доцент*

**АНУШ ШИРИНЯН**

*Доцент кафедры статистики АГЭУ,  
кандидат экономических наук*

***Статистические проблемы оценки уровня и исследования динамики производительности труда.–***

В статье рассмотрены статистические проблемы оценки уровня производительности труда и связанные с этим методические проблемы. В статье в измерениях уровня производительности труда по видам экономической деятельности в качестве продуктивного показателя предложен показатель чистой добавленной стоимости, а согласно методологии организации экономического развития и сотрудничества (ОЭСР) в качестве расходного показателя – совокупные расходы труда.

**Ключевые слова:** *производительность труда, фактически отработанное время, ежегодный минимальный отпуск, чистая добавленная стоимость, нормальная длительность рабочего времени.*

JEL: C1, N3, L5

**МАНУК MOVSIYAN**

*Dean of the Management Faculty at ASUE,  
PhD in Economics, Associate Professor*

**ANUSH SHIRINYAN**

*Associate Professor at the Chair of Statistics at ASUE,  
PhD in Economics*

***Statistical Problems of Estimating the Level of Labor Productivity and the Study of its Dynamics.–***

The article refers to statistical problems and methodological issues of estimating the level of labor productivity. In the article, in measuring the level of labor productivity according to the types of economic activity, the net added value is suggested to be used as a productive indicator and according to the methodology of the Organization for Economic Cooperation and Development (OECD), gross expenditure of labor is seen as the expenditure indicator.

**Key words:** *labor productivity, actual working time, minimum annual leave, net added value, normal working time.*

JEL: C1, N3, L5